նոյնպէս զարդարուած են երկրաչափական ձևերի մոզայիկներով, ինչպէս Գեղարդը։ Այս տիպի շէնքերը, թէև իրենց արտաքին պատերով մի քիչ սառը և միապաղաղ, բայց ներքուստ սիւներով, կամարներով և քանդակներով կենդանի, իսկ երբեմն իրենց գեղեցկութեամբ և ազնուութեամբ (Անիի Առաքելոց գաւիթը) կամ հոյակապ բարձրութեամբ, ընդարձակութեամբ և վիթխարի կամարներով խորը տպաւորիչ (Հաղբատի մեծ գաւիթը, Յովհաննէս Ա.ի շինած)։ Այդ գաւիթները իրենց ներքին, ճարտարապետական ձևակերպութեամբ մեծ նմանութիւն են բերում մեր



Պատկեր 150.

լեռնային գաւառների գիւղական տներին, ինչպէս Արցախն է կամ Սիւնիքը, ուրեմն և բնորոշ հայկական, բայց առաստաղների ստալակտիտներով և երկրաչափական մոզայիկ զարդարանքներով արեւելքի հետ կապուած և սելջուկեան արուեստի աղերսներով (*)։ Գեղարդայ վանքը այդ կողմից տալիս է համեմատութեան կարեւոր երեւոյթներ. տաճարի հարաւային պատին մեր մատնանշած քանդակների հետ շատ բնորոշ են ժամատան արեւմտեան դրան ճակատաքարի և սրաբեկ կամարի զարդարանքները (պատկ. 150)(*)։

Այս կենդանի շինարարութեան շրջանում ոչ պակաս ծաղկած պիտի լինի և գրչութեան արուեստը. մեր ձեռքն է հասել ՈԿԶ (= 1217) թուին գրուած, ուրեմն, հայր Բարսղի կամ Սարկաւագ վարդապետի ժամանակ, մի աւետարան, որ իւր գրչութեամբ և մանրանկարչութեամբ արևելեան Հայաստանի արժէքաւոր մնացորդներից մէկը կը լինէր, եթէ լաւ պահուած վիճակում հասած լինէր մեզ։ Հետաքրքրականն այն է, որ գրիչը, նկարիչը և կազմողը վանքի միաբաններն են, մի հանգամանք, որ ցոյց է տալիս, թէ ստեղծագործական կեանքն ու մշակոյթը շինարարութեան հետ զարգացած էր այստեղ բազմակողմանի կերպով։ «Ամն ի յընտրելոց քահանայից այ., որ էր մի ի ժառանգաւորաց սուրբ ուխտին Այրիվանաց, անեալ եւ ուսեալ ի նմին մենաստանի Խաչաւոր անուն» իւր Գառնեցի երեք եղբայրների հետ գրել է

(*) Մեր հայեացքը Հայ և Սելջուկեան արուեստների յարաբերութեան նկատմամբ. տես Խաղբակեանք, եր. 161 և շար.։

(*) Պատկերները տես և Ouvar. Mat. XIII. Tabl. IV. 8 և V. 9։